ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2023 թվականի N 2001-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N 718-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածը և 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» N 718-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N 1 հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հավելվածի N 1.2 ստուգաթերթի՝

ա. հարցաշարի 77-77.9-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«	77.	Նախադպրոցական հաստատությունների բուժկետ/կաբինետն ապահովված է սարքավորումներով և բժշկական գործիքներով.	Կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշում, հավելված N 12, կետ 1.28						
	77.1	Առաջին օգնության դեղորայքի և պարագաների հավաքածու					2	դիտողական	
	77.2	Սեղան, աթոռներ					1	դիտողական	
	77.3	Հասակաչափ					1	դիտողական	
	77.4	Կշեռք					1	դիտողական	
	77.5	Բժշկական թախտ					1	դիտողական	
	77.6	Տեսողության ստուգման աղյուսակ (Օրլովայի կամ Գոլովին-Սիվցևի աղյուսակ)					1	դիտողական	
	77.7	Տոնոմետր					1	դիտողական	
	77.8	Բժշկական ջերմաչափ					1	դիտողական	
	77.9	Ապակե պահարան՝ առաջին օգնության անհրաժեշտ դեղորայքի համար					1	դիտողական	»

բ. «Ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա՝» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Տվյալ ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա՝**

1. Կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշում.

2. Առողջապահության նախարարի 2013 թվականի փետրվարի 1-ի N 05-Ն հրաման.

3. Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857 հրաման.

4. Առողջապահության նախարարի 2013 թվականի ապրիլի 9-ի N 14-Ն հրաման.

5. Առողջապահության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N 35-Ն հրաման.

6. Առողջապահության նախարարի 2013 թվականի օգոստոսի 12-ի N 42-Ն հրաման.

7. Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրաման.

8. Առողջապահության նախարարի 2010 թվականի հուլիսի 16-ի N 13-Ն հրաման.

9. Առողջապահության նախարարի 2013 թվականի ապրիլի 9-ի N 14-Ն հրաման.

10. Առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրաման:».

2) հավելվածի N 1.4 ստուգաթերթը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

3) հավելվածի N 1.19 ստուգաթերթը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ